Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 8-ի N 1247-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԼԻԱԶՈՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ ԻՐԱՎԱԲԱ-ՆԱԿԱՆ ԱՆՁԻՆ ՉԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ

1. «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 302-րդ հոդվածով սահմանված՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի գործողությունները խոչընդոտելը և մաքսային մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջին չենթարկվելը, եթե իրավախախտման պատճառները՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 435-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ժամկետում չեն վերացվել.

2) 312-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունը շրջանցելով.

3) 313-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով.

4) 314-րդ հոդվածով սահմանված՝ կանխիկ դրամական միջոցները, վճարային գործիքները ապօրինի տեղափոխելը.

5) 315-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխումը՝ մաքսային և այլ փաստաթղթերը կամ մաքսային նույնականացման միջոցները խաբեությամբ օգտագործելով:

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝

1) 281-րդ հոդվածով սահմանված՝ ապօրինի ձեռնարկատիրական գործունեությունը.

2) 286-րդ հոդվածով սահմանված՝ առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթեր տրամադրելը, ծախսերի կամ եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթղթեր կազմելը և ներկայացնելը.

3) 289-րդ հոդվածով սահմանված՝ իրացման նպատակով կեղծ ակցիզային դրոշմանիշներ կամ դրոշմապիտակներ պատրաստելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, ձեռք բերելը կամ դրանք օգտագործելը կամ իրացնելը.

4) 290-րդ հոդվածով սահմանված՝ հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելը.

5) 291-րդ հոդվածով սահմանված՝ կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգությունը.

6) 292-րդ հոդվածով սահմանված՝ մշակութային արժեքների և ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների մաքսանենգությունը.

7) 294-րդ հոդվածով սահմանված՝ իրական շահառուների վերաբերյալ կեղծ տվյալներ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալները թաքցնելը.

8) 295-րդ հոդվածով սահմանված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույք ձեռք բերելը, իրացնելը կամ իրացմանն աջակցելը.

9) 296-րդ հոդվածով սահմանված՝ փողերի լվացումը.

10) 340-րդ հոդվածով սահմանված՝ ռազմական նշանակության արտադրանքի, տեխնիկայի, հրազենի կամ այլ նյութերի, սարքերի, առարկաների, ապրանքների մաքսանենգությունը.

11) 399-րդ հոդվածով սահմանված՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների կամ դրանց պրեկուրսորների մաքսանենգությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

09.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ